ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019թ.-ի դեկտեմբերի 18-20-ը Ռուսաստանի Դաշնություն (Սանկտ Պետերբուրգ) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը.**

Սմբատ Սաիյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Սանկտ Պետերբուրգ (Ռուսաստանի Դաշնություն), 2019 թվականի դեկտեմբերի 18-20-ը

4. **Հրավիրող կողմը.**

Եվրասիական տնտեսական հանձնաժողով

5. **Գործուղման նպատակը**

1) Կենսաթոշակային ապահովության ոլորտի ներկայացուցիչների կողմից «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների աշխատավորների կենսաթոշակային ապահովության մասին» համաձայնագրի նախաստորագրում (19 փետրվարի).

2) մասնակցություն Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստին (20 փետրվարի):

6. **Քննարկված թեմաները.**

«Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների աշխատավորների կենսաթոշակային ապահովության մասին» համաձայնագրի նախագիծ:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքային միգրացիայի և սոցիալական պաշտպանության վարչության պետ Պ. Ու. Սույումբաևան ներկայացրեց Համաձայնագրի նախագծում կատարված փոփոխությունները և Համաձայնագրի նախագծի վերջնական տարբերակը:

Նշվեց, որ առաջարկվող փոփոխություններն առաջարկվել են ՌԴ նախագահի աշխատակազմի խմբագիրների կողմից և բացառապես խմբագրական բնույթի են՝ պայմանավորված ռուսաց լեզվի քերականական կանոններով:

Կողմերը հաստատեցին և վավերացրեցին (նախաստորագրեցին) «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների աշխատավորների կենսաթոշակային ապահովության մասին» համաձայնագրի նախագծի վերջնական տարբերակը:

Համաձայնագրի նախագիծը ներկայացվեց Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստի հաստատմանը:

Միաժամանակ, կարևորվեց հնարավորին սեղմ ժամկետներում համաձայնագրի վավերացումը անդամ պետությունների կողմից:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Ս.թ. դեկտեմբերի 20-ի նիստում Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդը հավանության արժանացրեց «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների աշխատավորների կենսաթոշակային ապահովության մասին» համաձայնագիրը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջիկայում Համաձայնագիրը «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով կներկայացվի Ազգային ժողովի վավերացմանը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

24.12.2019թ